


ՄՏՈՐՈՒՄՆԵՐ "ԱՐԹՆՑԷ՛Ք, ՀԱՅԵՐ, ԱՐԹՆՑԷ՛Ք" ՀՈԴՎԱԾԻ ԱՌԻԹՈՎ

Posted on December 31, 2009 by Keghart



Category: [Opinions](#)



Հեղինակ՝ Հարություն Առաքելյան, 31 Դեկտեմբեր 2009

Ողջուններս [Պրն. Գրաճեանին](#),

Դուք շատ ցավոտ թեմա եք բարձրաձայնել, որից չենք կարող փախչել ազգովի, որովհետեւ մեր պատմության տխուր էջերն են... Եւ վատը նա է, որ դասեր չենք քաղել մեր պատմությունից ու շարունակվում է նույն անպտուղ միջկուսակցական հարաբերությունները...

Հեղինակ՝ Հարություն Առաքելյան, 31 Դեկտեմբեր 2009

Ողջուններս [Պրն. Գրաճեանին](#),

Դուք շատ ցավոտ թեմա եք բարձրաձայնել, որից չենք կարող փախչել ազգովի, որովհետեւ մեր պատմության տխուր էջերն են... Եւ վատը նա է, որ դասեր չենք քաղել մեր պատմությունից ու շարունակվում է նույն անպտուղ միջկուսակցական հարաբերությունները...

Ըստ իս այդպես էլ կշարունակվի, եթե նստենք ու սպասենք, թե հանուն ազգային նպատակների մի օր կուսակցությունները միաբանվելու են... Նույնիսկ չնայած այն պարագային, երբ Հայաստանի վարչակազմի անհեռանկար հայ-թուրքական մերձեցմանը միտված պայմանագրի դեմ միասնականություն ցուցաբերեցին ավանդական կուսակցությունները...

Հարցը ավելի խոր արմատներ ունի... Այ Ձեր նշած "եթե"-ների մեջ ասում եք,

-եթե փոքր Տիգրան չդաւաճաներ իր հօր, Մեծն Տիգրանի եւ հրովմեացիները դաւադրաբար չմտցներ մեր երկրի սահմաններէն ներս, այսօր ծովէ-ծով Հայաստան մը կ'ունենայինք ...

-եթե Վասակ Սիւնին չանցներ պարսիկներուն կողմը, Վարդան Մամիկոնեան անպայման կը յաղթեր թշնամիին ...

-եթե Հեթումեանները չդիրքորոշուէին Լատիններուն կողմը իսկ Ռուբինեանները՝ յոյներուն կողմը, Կիլիկիան չէինք կորսնցներ ...

-եթե Հնչակեան կուսակցութիւնը, Դաշնակցութիւնը եւ հայ համայնավարները միակամ ըլլային, այժմ Կարսը, Արտահանը եւ Արարատ լեռը Հայաստանի սահմանին մէջ կ'ըլլային ...

Ձեր բոլոր նշածները ոչ հայանպաստ քաղաքական որոշումներ են կամ փախուստ համատեղ որոշումներ կայացնելուց...

Ստացվում է, որ մեր քաղաքական միտքը դարեր շարունակ հայկական միջավայրում չի ձեւավորվել, հետեւաբար չի ծառայել Հայ ժողովրդին... Եթե հայկական քաղաքական միտքը ձեւավորվել է հռոմեական, արաբական, բյուզանդական, պարսկական, մոնղոլ-

